



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների  
դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Գեղարքունիքի մարզ Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ  
դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների  
կարևորություն

Վերապատրաստող, մեկնոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Էլինար Վարդանյան

## Բովանդակություն

Ներածություն .....	3
<b>Գլուխ 1</b> Դաս, դասի կառուցվածք.....	5
<b>Գլուխ 2</b> Դասի պլանավորման արդյունավետությունը.....	9
<b>Գլուխ 3</b> Դասի պլանավորման արդյունավետ հնարներ.....	16
Եզրակացություն.....	21
Օգտագործված գրականություն.....	22

## Ներածություն

Միշտ արդիական է դասի պլանավորումը, դասի ընդհանուր պատկերի մասին առավել հեզգրիտ պատկերացում ստանալու ձգտումը: Համակողմանի զարգացած սերունդ ունենալու հանգամանքով պայմանավորված՝ այդ գաղափարների անհրաժեշտությունը արտացոլում են գտնում ժամանակակից դպրոցական կրթության հայեցակետում: Այդուհանդերձ, հաճախ դժվար է պատկերացնել խնդրո առարկայի լուծումը ուսումնական գործընթացի շրջանակներում, ուստի ուսուցման տեսությունում և պրակտիկայում օգտագործում են դասի պլանավորման մոդելը, ինչպես նաև պլանավորման արդյունավետ եղանակների կարևորության կիրառումը դասադրոցեայի ընթացքում:

Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությամբ պայմանավորված՝ ուսումնական գործընթացն ունի վառ արտահայտված կիրառական ուղղվածություն. թույլ է տալիս սովորողներին ցուցադրել մի շարք առարկաներից ունեցած իրենց պատկերացումներն ու գիտելիքները, ուստի այդ ամբողջական կիրառությունը բարձրացնում է նաև սովորողների մոտիվացիան: Դասի պլանավորման միջոցով հնարավոր է ապահովել միջառարկայական կապեր, իսկ միջառարկայական կապերի օգտագործումը նպաստում է սովորողների մտածողության, ինֆուրույնության, հանաչողական և ստեղծագործական ակտիվության զարգացմանը, ինչպես նաև մետահանաչողություն է զարգացնում: Դասի պլանավորման միջոցով սովորողի մեջ արթնացնել հետաքրքրություններ, նորություններ, ինֆուրույնություն, ստեղծելու, հորինելու, նախագծելու հնարավորություն: Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների հանաչողական հետաքրքրությունների զարգացմանը՝ ուստի դասի պլանավորման մեջ անհրաժեշտ է ներառել մի շարք մեթոդներ և հնարներ:

**Հետազոտության արդիականությունը** պայմանավորված է դասի պլանավորման կարևորությամբ , ինչպես նաև նպաստում է դասապրոցեսի արդյունավետության բարձրացմանը՝ կարևորելով հստակ և չափելի նպատակների սահմանումը:

**Հետազոտության նպատակն** է բացահայտել դասի պլանավորման կարևորությունը, սահմանել թեմայի հստակ նպատակ կամ նպատակներ, պարզաբանել և վեր հանել դասի արդյունավետության կարևորությունը, վերլուծել նպատակների, մեթոդների և հնարների անհրաժեշտությունը՝ կարևորելով դասի պլանավորման արդյունավետությունը:

**Հետազոտության խնդիրն** է վերլուծել մեթոդների ընտրությունը, վեր հանել ուսուցման մեթոդների արդյունավետությունը, ինչպես նաև ցույց տալ դասի կառուցվածքային առանձնահատկությունները:

**Դաս, դասի կառուցվածք**

«Երեխաներին դասավանդվող առարկաները պետք է համապատասխանեն նրանց տարիքին, հակառակ դեպքում վտանգ կա, որ նրանց մեջ կգարգանա հարակոչություն, նորածեղություն, ունայնություն:»

Կանոն

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման եւ դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների եւ սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միեւնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով(դասացուցակ) եւ բուլոնրի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բուլոնր բաղադրիչները՝ նպատակ, թվանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման եւ դեկավարման գործունեություն եւ դրանից բխող դիպակտիկ տարրեր: Դասի արդյունավետության հետ կապված մտահոգումների արդյունավետ իրագործման հրամայականն է դասի ամենօրյա պլանավորումը, որի բաղադրիչներն են՝ դասի թեման, նպատակները (կրթական, զարգացնող, դաստիարակչական), տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման եւ ընդհանրացման), հիմնական փուլերին հասկացվող ժամանակի թաշտումը, հենհային հասկացությունների ձեւավորման փուլերը (հասկացությունների ներմուծում, օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, ընդունում սխեմայի կազմում, ադյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեխստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում):

Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3

գրաֆներ՝

- Դասի կառուցվածքային տարրերը,
- Ուսուցչի գործունեությունը,
- Աշակերտի գործունեությունը,

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել,

կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիւշերը:

Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևեր և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում աշակերտների դերի վրա, բաժանվում են 3 խմբի՝

1. Պասիվ. այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «օբյեկտ», որը պետք է յուրացնի և վերաբաղյալի գիտելիքների աղբյուրի՝ ուսուցչի փոխանցած նյութը: Հիմնական մեթոդներն են դասախոսությունը, ընթերցանությունը և հարցումը:

2. Ակտիվ. Այստեղ աշակերտները հանդիսանում են ուսումնառության «սուբյեկտ» և կատարում են ստեղծագործ առաջադրանքներ, ուսուցչի հետ երկխոսության մեջ են մտնում: Հիմնական մեթոդներն են ստեղծագործ առաջադրանքները, հարցերը ուղղված աշակերտից ուսուցչին և ուսուցչից՝ աշակերտին

Փոխներգործուն. (անգլերենից թարգմանած **inter** - «միջև» **act** – «Գործողություն») թույլ են տալիս ուսումնական գործընթացի մասնակիցներին, ներառյալ ուսուցչին փոխադրել միմյանց վրա: Այս մեթոդները

առավել համապատասխանում են անձի անհատականության բացահայտմանն ուղղված մտտեցումներին, քան որ վերջիններս ենթադրում են համատեղ ուսուցում (խմբային, համագործակցային ուսուցում), ընդ որում և՛ առակերտները, և՛ ուսուցիչը հանդիսանում են ուսումնական գործընթացի սուբյեկտներ: Ուսուցիչը հաճախ ներկայանում է կրթական գործընթացի կազմակերպիչի, ֆասիլիտատորի, խմբի ղեկավարի, առակերտների նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանների ստեղծողի դերում:

**Դասի նպատակները** ներառում են հետևյալը

1. **Ուսումնական:** գիտելիքներ (հասկացություններ, երևույթներ, մեծություններ, բանաձևեր, օրենքներ, տեսություններ և այլն, ավելի փոքր՝ ներկայացման պլանների առումով) հմտություններ: հասուն (խնդիրների լուծում, չափումներ և այլն) հանրակրթական (գրավոր և բանավոր խոսքի նախադասական և երկխոսական, տարբեր հնարքներաշխատել ուսումնական և լրացուցիչ գրականության հետ՝ կարևորելով հիմնականը պարզ և բարդ պլանի, հուշագրերի և ալգորիթմների, ռեֆերատների, ռեֆերատների, դիագրամների տեսով. պատասխանների հիմնական տեսակների տիրապետում (վերապատմում, թեմատիկ պատասխան, Համեմատական բնութագրեր, հաղորդագրություն, հաշվետվություն), կառուցել հասկացությունների սահմանում, համեմատություն, ապացույցներ, որոշել աշխատանքի նպատակը, ընտրել աշխատանքի ռացիոնալ եղանակներ, վերահսկողության և փոխադարձ վերահսկողության մեթոդների տիրապետում, ինֆնագնահատական և փոխադարձ գնահատում, կոլեկտիվ աշխատելու ունակություն, ղեկավարել թիմի աշխատանքը և այլն: հմտությունը ավտոմատիզմին բերված հմտություն է, ֆիզիկա դասավանդելիս հմտությունների ձևավորումը չի ապահովվում:

2. **Ուսումնական:** բարոյական և գեղագիտական գաղափարներ, աշխարհի մասին հայացքների համակարգ, վարքագծի նորմերին հետևելու, օրենքներին համապատասխանելու ունակություն: անհատի կարիքները, սոց. վարքագիծ, գործունեություն, արժեքներ և արժեքային կողմնորոշում, հեռանկար.(նյութի կառուցվածքը, նյութը՝ նյութի տեսակ, դինամիկ և վիճակագրական օրինաչափություններ, պայմանների ազդեցությունը ֆիզիկական պրոցեսների ընթացքի բնույթի վրա և այլն):

**Դասի կառուցվածքը:** Ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է դասի կառուցվածք:

Դասի կառուցվածքային փուլերն են՝

1. կազմակերպչական պահ
2. տնային առաջադրանքի բազմակողմանի ստուգում,
3. գիտելիքների կարողությունների և հմտությունների բազմակողմանի ստուգում,
4. նոր նյութի ակտիվ և ըմբռնումով յուրացնելուն միտված նախապատրաստություն,
5. նոր գիտելիքների յուրացում,
6. նոր նյութի ըմբռնման ստուգում: Նոր գիտելիքների յուրացում,
7. նոր նյութի ամրապնդում,
8. տնային առաջադրանքի հանձնարարում, իրականացման մեկնաբանում,
9. դասի ամփոփում:

## ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Դասի թեման /ի՞նչ ուսուցանել/
2. Դասի նպատակները /ի՞նչ ու՞՞ ուսուցանել/
3. Ակնկալվող արդյունքներ
4. Գնահատում
5. Ուսուցման մեթոդներ /ի՞նչպե՞ս ուսուցանել/
6. Դասի կահավորումը
7. Դասի ընթացքը
8. Տնային հանձնարարություններ
9. Դասի ամփոփում
10. Դասի անդրադարձը:



## Գլուխ 2

### Դասի պլանավորման արդյունավետությունը

Ուսուցչի մասնագիտական որակներից մեկն էլ դասը ճիշտ պլանավորելն է, որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է:

Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթացիվ է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ սովորեցնել
- Ինչն՞ է սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել:

Ելնելով զարգացնող կրթության սկզբունքներից՝ ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի օգնի աշակերտին ինֆորմալիաներ գիտելիքներ ձեռք բերել,


- սովորել սովորեցնի,
- ուսուցման ընթացքում գլխավոր ծանրաբեռնվածությունն ընկնի ոչ թե աշակերտի հիշողության, այլ մտածողության վրա,
- ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն,

Աշակերտները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով (ուսուցչի հաղորդումից, դասագրքից) այլ ինֆորմալիաներ, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում, ինչը աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում, դրական վերաբերմունք ձևավորում ուսման նկատմամբ, նպաստում դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա, և՛ հեռահար խնդիրների լուծումը:

Ներկայացնենք ակտիվ ուսումնառության և մտածողության զարգացմանը նպաստող դասի պլանավորում մի ուժագրավ կառույց՝ ըստ «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով»:

Ծրագիրը ուսուցման գործընթացում կիրառում է դասի՝ 3 փուլից (խթանում, իմաստի ընկալում, կռահատում) կազմված մի մոդել, որն անվանում են նաև ԽԻԿ համակարգ:



## 5 փայլով դասի պլանավորման և ԽԻԿ համակարգով պլանավորման ուղեցույց

### Փայլ 1. Դասի սկիզբ՝ խթանում

Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նախկին գիտելիքի հետ:

### Փայլ 2. Նոր նյութի ներկայացում

Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Որո՞նք են ներկայացվող նյութի կարևոր դրույթները:

### Փայլ 3. Ուղղորդված- գործնական աշխատանք

Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին համագործակցված աշխատելու, ուսուցչի ուղղորդմամբ կատարելու գործնական աշխատանք տրված նյութի վերաբերյալ:

---

#### **Քայլ 4. Ինֆորմացիոն աշխատանք/իմաստավորում**

---

Ի՞նչպես է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինֆորմացիոն աշխատելու: Ինչպես են աշակերտները ինֆորմացիոն կիրառումները օգտագործում:

---

#### **Քայլ 5. Դասի ավարտ/ կռադատում**

---

Ամփոփվում են դասի կարևոր մասերը: Անհրաժեշտության դեպքում տրվում է տնային/արտագրասարանային առաջադրանքներ:

---

ԽԻԿ համակարգի առաջին փուլը *խթանումն է*: Այս փուլի նպատակն է աշակերտների հետաքրքրությունը խթանել, նպաստել, որ նրանք խորհեն նոր հաղորդվելիք թեմայի մասին, վեր հանել թեմային առնչվող նրանց նախնական գիտելիքները, հարցեր տալ և սահմանել սովորելու կոնկրետ նպատակները:

**Դասի խթանման փուլի ակտիվ մեթոդներ են**

- Մտազրի
- Պրիզմա
- Հարցեր
- Համառոտ

գրույց և այլն

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

ա/ Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը, դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով հատկապես երբ նոր դասը հնի շարունակությունն է;

բ/ բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները;

գ/Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց ֆննարկվելիք նյութի մեջ;

դ/ աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում; Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, սնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով:

Խթանման փուլի առավել շատ կիրառելի մեթոդներից մեկը մտազրոհն է, որը հնարավոր է կիրառել գրեթե բոլոր առարկաների շրջանակներում:

### **Մտազրոհ մեթոդ**

Դասի խթանման փուլի Մտֆերի տարափը կամ մտազրոհը սովորողների աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է, դրա գլխավոր գործառույթը մտֆերի գեներեցիան է:

Այս մեթոդը մտֆերի տարափ են անվանում քանի որ խրախուսվում է հանախ պարզապես ուսումնասիրվող 8 նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը; Դասարանի աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է սեփական տեսակետները առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի; Բոլոր մտֆերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա; Ավելին պատկերավոր բնութագրելու համար երբեմն ասվում է, որ մեթոդը կիրառելիս արտահայտված բոլոր մտֆերն ու գաղափարները ընդունելի են << սխալ >> չկա; Մտազրոհը մեծապես նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը; Նշենք որոշ հանգամանքներ՝ մեթոդը նպաստում է նոր գաղափարների ի հայտ գալուն;

### **Դասի իմաստի ընկալման փուլի ժամանակ կիրառելի մեթոդներ կարող են լինել**

- Վեցի դիագրամա
- Աղյուսակների կազմում/ S-աձև, Մ-աձև/
- Խնամկար
- Ապագայի անիվ

- Համառոտ դասախոսություն կամ պատմել
- Զբույց
- Խորանարդում և այլն

**Դասի կռահատում փուլի ժամանակ նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները.**

- Քառաբաժան աղյուսակ
- Գաղափարների ֆարտեզագրում
- Թեսեր
- Հարցեր ու պատասխաններ , ամփոփում և այլն:

**Քառաբաժան աղյուսակ**

Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեխնիկական աշխատելիս; Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս; Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ բաժանելով 4 մասի; Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից 9 յուրաքանչյուրում; Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոփոխել; Կարելի է իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները / օրինակ ըստ Բլյումի դասակարգման/

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ի՞նչպես կարող եմ օգտագործել	Ի՞նչ եզրակացություն արեցի

Քառաբաժան աղյուսակի վերը նշված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել ըստ համարակալման: Անհատական աշխատանքի դեպքում գույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ամբողջ թիմին; Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է ամբողջ դասարանին; Հնարավոր է որ ըստ ուսումնասիրվող նյութի կարևորվի տեխստի պատմվածքի կամ նյութի դիտարկումը որոշակի տեսանկյունով; ինչը կնպաստի, որ հատկապես ուշադրություն դարձվի քառաբաժանի այս կամ այն հատվածի գրառումների վրա, որոնք հատուկ պետք է առանձնացնել ներկայացնել և ֆինալիզել; Հարկ է նշել որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասի կշռադասման փուլում; Ներառական կրթության համար նույնպես կիրառելի է քառաբաժան աղյուսակը գունային տարբեր ձևերով; Ամեն մի գույնի աղյուսակի մեջ Ներառական կրթություն ստացող աշակերտը կարող է գրել իր սովորածը պատմական թիվը պատմական անունը, իր հասկացածը; ԿԱՊԿՈՒ կրթություն ստացող երեխաների համար առավել մատչելի է պատմության դասը տանել աղյուսակների սխեմաների միջոցով:

### **Քառաբաժան մեթոդ կամ Ֆրայերի մոդել**

Հանալս դասադրոցեսի արդյունավետությունը, ինչպես նաև սովորողների մոտիվացիան բարձրացնելու նպատակով կիրառում ենք ֆրայերի մոդելը:

Ֆրայերի մոդելը գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել՝ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Կարելի է նաև տեսրի էջը խաչածև բաժանելով 4 հավասար մասերի: Յուրաքանչյուր մասում ուսուցիչն առաջարկում է գրել որոշակի հարց և պատասխանել, օրինակ՝ Հայաստանի բնակչությունը » քեման ուսուցանելիս ուսուցիչը կարող է առաջարկել հետևյալ ֆառաբաժանը.

Բնութագրող

Նկար գծագիր

Սահմանել ՀՀ բնակչության թվի և շարժի փոփոխությունները:

Գրաֆիկի տեսքով պատկերել այդ փոփոխության կորերը::


Օրինակներ

Իմաստավորում

Բերել օրինակներ բնական և մեխանիկական շարժերի :

Կատարել համեմատում բնակչության և Հայաստանի բնակչության թվի, շարժի վերաբերյալ :

## Ֆրայերի մոդել



### Ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդ

- Եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում առակերտները և ուսուցիչը, ապա այս մեթոդի ժամանակ առակերտները փոխադարձաբար ակտիվ

գործունեության մեջ են գտնվում հաև միմիայնց հետ և ուսուցման պրոցեսում գերակայում է աշակերտների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը առաջատար դերում չէ, նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դրան հաջորդում է **ինաստի ընկալման** փուլը, որի ընթացքում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցով ծանոթանում են նոր նյութին, և այդ ընթացքում նրանցից ակնկալվում է, որ կարողանան նոր տեղեկությունները, գաղափարները կամ բովանդակությունը ներհյուսել իրենց սեփական՝ արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ:

Ավարտվում է **կռադատման փուլով**, որի ընթացքում աշակերտներն իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին՝ վերակառուցելով իրենց գիտելիքները:

Ներկայացնենք մտածողությունը խթանող դասի պլանավորման կառուցվածքի մի օրինակ:

### **Մինչև դասը**

Մինչև դասը ուսուցիչը պետք է փորձի պատասխանել իր դասի նպատակի, խնդիրների, նախադրյալների, գնահատման և ժամաֆանակի մասին մի շարք հարցերի:

### **Հիմնավորում**

- Ի՞նչու է այս դասն արժեքավոր:
- Ի՞նչպե՞ս է այն առնչվում աշակերտների արդեն սովորածին, իմացածին և այն թեմային կամ գաղափարներին, որոնք հետագայում պետք է սովորեն:
- Քննադատական մտածողության զարգացման ի՞նչ հնարավորություններ է ընձեռում այս դասը:

### **Խնդիրներ**

- Հատկապես ի՞նչ գիտելիքներ և պատկերացումներ պետք է հետագոտվեն կամ հաղորդվեն:



- Առակերտներն ինչպե՞ս կարող են կիրառեն այդ գիտելիքները և պատկերացումները:

### **Նախադրյալներ**

- Այս դասն արաբյունավետ կերպով յուրացնելու համար առակերտները նախապես ի՞նչ պետք է իմանան կամ արդեն կարողանան անել:

### **Գնահատում**

- Առակերտի իմացության ի՞նչ ապացույցներ է պետք փնտրել:

### **Խթանում**

- Ինչպե՞ս կարելի է օգնել, ուղղորդել առակերտներին, որ նրանք կարողանան ձևակերպել սովորելու իրենց նպատակներն ու հարցերը և վեր հանել, բացահայտել իրենց նախնական գիտելիքները:

### **Իմաստի ընկալում**

- Առակերտներն ինչպե՞ս են հետազոտելու նյութը:

Ի՞նչպես են վերհսկելու նյութի սեփական ընկալումը:

### **Կռադատում**

- Առակերտներն ինչպե՞ս կարող են օգտագործել, կիրառել դասից սովորած նոր գաղափարները: Ինչպե՞ս պետք է նրանց ուղղորդել, որ խորհեն այս նոր գիտելիքների, տեղեկությունների, գաղափարների մասին, գտնեն հարցերի պատասխանները, փնտրեն անորոշ կետերի պարզաբանումները:

### **Ամփոփում**


- Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի ավարտին: Խնդիրները որքանո՞վ պետք է արդեն լուծված լինեն:

## **Դասից հետո**

Իսկ դասից հետո սեփական աշխատանքը վերլուծելու համար կարևոր է պատասխանել էլի մի քանի հարցի:

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուսուցչության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուսուցչությունը, ուսուցանվող նյութը տեղավորվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:

Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ակնատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:



**Դասի պլանավորման արդյունավետ հնարներ**

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հստ գիտական հետազոտությունների՝ էտևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի դասի պլանավորման արդյունավետության բարձրացմանը.

- Դասի պլանավորումը պարտադիր է:
- Դասի յուրաքանչյուր փուլ պետք է միտված լինի նպատակին կամ նպատակներին հասնելուն:
- Փուլաբաժանումը և մեթոդների ընտրությունը կախված են դասի թեմայից, առարկայի, դասարանի առանձնահատկություններից և կատարվում են ուսուցչի ընտրությամբ:

Դասի պլանավորման տարբեր ձևաթղթերից օգտվելու կամ բովանդակությունը ուղղակիորեն շարադրելու առումով ուսուցիչներն ազատ են

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

**1. Խորհրդավորություն** Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների սովորությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են թույլ առաջ բացահայտել գաղտնիքը:

**2. Գուշակություն** Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կարատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը:

**3. Զարմանք**, անսպասելիություն Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը:


Դասի պլանավորման արդյունավետ հնարներց են.

- Դասի/թեմայի հստակ նպատակի կամ նպատակների սահմանում:
- Դասի հստակ փուլաբաժանում:
- Յուրաքանչյուր փուլի ընթացքի, կիրառվելիք մեթոդների հակիրճ նկարագրություն:


Դասի նպատակները սահմանելու համար շատ կիրառելի են Անդերսոնի և Բլումի տախտնովիանները, որոնք նպաստում են դասի արդյունավետության բարձրացմանը, և օգնում ուսուցիչներին սահմանել ավելի իրատեսական և չափելի նպատակներ: Ստորև ներկայացնում ենք տախտնովիանները:

Անդերսոնի տաքսոնոմիան կրթության նպատակները սահմանող աստիճանակարգ է, որը ներկայացնում է սովորողի ուսումնառության առաջընթացն ու զարգացումը:

Անդերսոնի տաքսոնոմիայի մակարդակները ու նկարագրող բայերը



Բլումի տաքսոնոմիա



## Եզրակացություն

Յուրաբանչյուր ոլորտի համար սահմանվել են մասնագիտական գործունեության ձեւեր, օրինակ՝ դասավանդման մեթոդաւանկավարժական կարողությունների համար դրանք հետեւյալն են. դասընթացների եւ դասերի պլանավորում, դասի վարում, ՏՀՏ-ի ինտեգրում, 21-րդ դարի հմտությունների խթանում եւ ուսուցանողների կառավարում:

Յուրաբանչյուր մասնագիտական գործունեության ձեւի համար սահմանվել են հստակ եւ չափելի կարողունակություններ: Օրինակ՝ դասընթացների եւ դասերի պլանավորման համար.

ա. ուսուցիչը կարողանում է մշակել իր դասավանդած ուսումնական առարկայի թեմատիկ պլանը՝ հստակ սահմանելով ուսումնական նյութի յուրացման, կարողությունների զարգացման եւ գնահատման համար անհրաժեշտ ժամաւանակը՝ հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայի չափորոշիչի, առարկայի ծրագրի պահանջներին, ուսումնական պլանով առարկային հատկացված ժամաւանակին եւ գնահատման մեթոդաբանությանը համապատասխան

բ. ուսուցիչը կարողանում է կազմել առանձին դասերի պլաններ՝ հստակ նշելով դասի նպատակը, վերջնարդյունքները, խնդիրները եւ մեթոդները, յուրաբանչյուր սովորողի մասնակցությունը ենթադրող գործողությունները, որոնք կնպաստեն սովորողների արդյունավետ ուսումնատությանն ու զարգացմանը:

գ. Ուսուցիչը պետք է կարևորի դասի պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը եւ արդյունավետությունը՝ ապահովելով դասի ճիշտ կառուցվածքը, մեթոդների ընտրությունը եւ առանձնահատկությունները:

Օգտագործված գրականություն

1. <https://lib.amedu.am/files/resource/files/2022-099/4fcded4caae18918a24f264dd3b9aa91.pdf>
2. «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի 2021  
  
Ծրագրի հեղինակ՝ Գոռ Մարիկյան
3. <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>
4. <https://www.facebook.com/krtutyun.am/posts/1784691618456813/>
5. <https://multiurok.ru/files/dasi-planavorowm-7.htm>
6. <https://www.slideshare.net/Ohanyacollege/ss-13804098>
7. <https://innostud.am/application/library/5ced296a.pdf>